«ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/1.9»

ք. Կապան «27» հունվար 2021թ.

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Կարեն Մելքոնյանի, որը գործում է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Է. Փոթոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3595600 (երեք միլիոն հինգ հարյուր իննսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ	«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ»ՄՊԸ
Սյունիք Կապան Մ. Սոսեփանյան 13	ք. Երևան, Աբովյան փ. /23
Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ	Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 15700263039801 00	Հ/Հ 19300653151400
ՀՎՀՀ 09420382	ՀՎՀՀ 02828767
Տնօրեն՝ Գարիկ Մելքումյան	Տնօրեն՝ Է. Փոթոյան
ստորագրություն	ստորագրություն

Հավելված
«27» հունվար 2021 թ. կնքվ
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/1. 9 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
Չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
3	33621420/502	Ատորվաստատին 10մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Ատորվաստատին 10մգ	հատ	28	168000	6000	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Գյումրի, Մ.Մտնեփանյան 13 «Գյումրիի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել	2021 թվականին ապրանքը կմատակարարվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների նախատեսման և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում:
4	33621420/503	Ատորվաստատին 20մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Ատորվաստատին 20մգ	հատ	31	279000	9000			
5	33621420/504	Ատորվաստատին 40մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Ատորվաստատին 40մգ	հատ	68	61200	900			
13	33691185/505	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ,լուծույթ ներարկման,40մգ/մլ; ամպուլներ 2մլ,	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա, Ավստրիա	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ,լուծույթ ներարկման,40մգ/մլ; ամպուլներ 2մլ,	հատ	550	137500	250			
16	33611130/501	ատրոպին (ատրոպինի սուլֆատ),լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման,1մգ/մլ; ամպուլներ 1մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	ատրոպին (ատրոպինի սուլֆատ),լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման,1մգ/մլ; ամպուլներ 1մլ	հատ	52	26000	500			

18	33651112/506	ամօքսիցիլին քլավուլանաթթու 250մգ/5մլ+62,5մգ/5մլ; 100մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա, Սլովենիա	ամօքսիցիլին քլավուլանաթթու 250մգ/5մլ+62,5մգ/5մլ; 100մլ	հատ	3150	945000	300			
23	33621740/504	Ամլոդիպին 5մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Ամլոդիպին 5մգ	հատ	6.3	63000	10000			
26	33651125/506	Ազիթրոմիցին 250մգ;	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Ազիթրոմիցին 250մգ;	հատ	200	24000	120			
28	33661121/503	Ացետիլսալիցիլաթթու 100մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Ացետիլսալիցիլաթթու 100մգ	հատ	12	240000	20000			
42	33651114/501	Բենզիլպենիցիլին-G	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Բենզիլպենիցիլին-G	հատ	70	14000	200			
43	33691190/502	Թիոկտաթթու 25մգ/մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Թիոկտաթթու 25մգ/մլ	հատ	2630	263000	100			
48	33651131/504	Սուլֆամեթօքսազոլ 800մգ+160մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Սուլֆամեթօքսազոլ 800մգ+160մգ	հատ	530	159000	300			
59	33671116/502	քսիլոմետազոլին 0.5մգ/մլ; 10մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուրաինա, Բելառուսիակ	քսիլոմետազոլին 0.5մգ/մլ; 10մլ	հատ	375	11250	30			
60	33691176/562	Գլիցին 100մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Գլիցին 100մգ	հատ	3.5	8750	2500			

64	33671130/502	Դիֆենհիդրամին լուծույթ ներարկման,10մգ/մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Դիֆենհիդրամին լուծույթ ներարկման,10մգ/մլ	հատ	21	210000	10000		
66	33631310/512	Դիկլոֆենակ 75մգ/3մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Դիկլոֆենակ 75մգ/3մլ	հատ	31	77500	2500		
67	33631310/519	Դիկլոֆենակ 100մգ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Դիկլոֆենակ 100մգ	հատ	27	64800	2400		
71	33631310/517	դիկլոֆենակ 1մգ/մլ; 10մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	դիկլոֆենակ 1մգ/մլ; 10մլ	հատ	1550	46500	30		
74	33661153/505	դեքսամեթազոն,ակնակաթիլներ,1մգ/մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	դեքսամեթազոն,ակնակաթիլներ,1մգ/մլ	հատ	570	57000	100		
76	33611170/503	դրոտավերին լուծույթ ներարկման,20մգ/մլ; ամպուլներ 2մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	դրոտավերին լուծույթ ներարկման,20մգ/մլ; ամպուլներ 2մլ	հատ	56	84000	1500		
77	33641310/501	դիդրոգեստերոն, դեղահատեր թաղանթապատ,10մգ;	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	դիդրոգեստերոն, դեղահատեր թաղանթապատ,10մգ;	հատ	245	196000	800		
80	33691176/566	դոպամին ,200մգ/5մլ; ամպուլներ 5մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	դոպամին ,200մգ/5մլ; ամպուլներ 5մլ	հատ	245	49000	200		
84	33621760/505	Էնալապրիլ դեղահատեր,5մգ;	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Էնալապրիլ դեղահատեր,5մգ;	հատ	4.8	96000	20000		

85	33621760/506	Էնալապրիլ դեղահատեր,10մգ;	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Էնալապրիլ դեղահատեր,10մգ;	հատ	5.2	124800	24000			
86	33621760/507	Էնալապրիլ, դեղահատեր,2,5մգ;	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Էնալապրիլ, դեղահատեր,2,5մգ;	հատ	28	56000	2000			
92	33671114/503	ամինոֆիլին,լուծույթ ն/ե ներարկման,24մգ/մլ; ամպուլներ 5մլ	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	ամինոֆիլին,լուծույթ ն/ե ներարկման,24մգ/մլ; ամպուլներ 5մլ	հատ	37	129500	3500			
93	33671114/504	ամինոֆիլին,դեղահատեր,150մգ;	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	ամինոֆիլին,դեղահատեր,150մգ;	հատ	4	4800	1200			

*Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ՝ որոնք ըստ կարիքի կարող են նվազել:

**Սահմանություն

*Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը

ա. 2,5 տարի և ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 24 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

* Որակի սերտիֆիկատների առկայություն

*Սահմանություն – Եթե գնման առարկաների հատկանիշները պահանջ կամ հրում պարունակեն որևէ առևտրային նշան, ֆիրմային անվանումը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրում կարդալ «կամ համարժեք» բառը: Համաձայն (Օրենքի 2հոդված 13, Կետ 5)

***Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից՝22, Սյունիքի մարզ, ք.Կապան, Մ. Մոսեփյան 13, « Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝09:00-17:00:

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պատվիրատուի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ

Սյունիք Կապան Մ. Մոսեփյան 13

Բանկ՝ «Մասիսարմենիա»ՓԲԸ

Հ/Հ 15700263039800100

ՀՎՀՀ 09420382

Տնօրեն՝ Կարեն Հակոբյան

ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ»ՍՊԸ

ք. Երևան, Աբովյան փ. /23

Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300653151400

ՀՎՀՀ 02828767

Տնօրեն՝ Է. Փոլոյան

ստորագրություն

Հավելված
«27» 01. 2021 թ. կնքվ
ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/1. 9 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**				
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Ընդամենը
3	33621420/502	Ատորվաստատին 10մգ	42000	84000	126000	168000	168000
4	33621420/503	Ատորվաստատին 20մգ	69750	139500	209250	279000	279000
5	33621420/504	Ատորվաստատին 40մգ	15300	30600	45900	61200	61200
13	33691185/505	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ,լուծույթ ներարկման,40մգ/մլ; ամպուլներ 2մլ,	34375.01	68750.01	103125	137500	137500
16	33611130/501	ատրոպին (ատրոպինի սուլֆատ),լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման,1մգ/մլ; ամպուլներ 1մլ	6500	13000	19500	26000	26000
18	33651112/506	ամօքսիցիլին քլավուլանաթթու 250մգ/5մլ+62,5մգ/5մլ; 100մլ	236250	472500	708750	945000	945000
23	33621740/504	Ամլոդիպին 5մգ	15750	31500	47250	63000	63000
26	33651125/506	Ազիթրոմիցին 250մգ;	6000	12000	18000	24000	24000
28	33661121/503	Ացետիլսալիցիլաթթու 100մգ	60000	120000	180000	240000	240000
42	33651114/501	Բենզիլպենիցիլին-G	3500	7000	10500	14000	14000
43	33691190/502	Թիոկտաթթու 25մգ/մլ	65750.01	131500	197250	263000	263000
48	33651131/504	Սուլֆամեթօքսազոլ 800մգ+160մգ	39750	79500	119250	159000	159000
59	33671116/502	քսիլոմետազոլին 0.5մգ/մլ; 10մլ	2812.5	5625	8437.5	11250	11250
60	33691176/562	Գլիցին 100մգ	2187	4375	6562	8750	8750
64	33671130/502	Դիֆենհիդրամին լուծույթ ներարկման,10մգ/մլ	52500	105000	157500	210000	210000
66	33631310/512	Դիկլոֆենակ 75մգ/3մլ	19375	38750	58125	77500	77500
67	33631310/519	Դիկլոֆենակ 100մգ	16200	32400	48600	64800	64800
71	33631310/517	դիկլոֆենակ 1մգ/մլ; 10մլ	11625	23250	34875	46500	46500
74	33661153/505	դեքսամեթազոն,ակնակաթիլներ,1մգ/մլ	14250	28500	42750	57000	57000
76	33611170/503	դրոտավերին լուծույթ ներարկման,20մգ/մլ; ամպուլներ 2մլ	21000	42000	63000	84000	84000
77	33641310/501	դիդրոգեստերոն, դեղահատեր թաղանթապատ,10մգ;	49000	98000	147000	196000	196000
80	33691176/566	դոպամին ,200մգ/5մլ; ամպուլներ 5մլ	12250	24500	36750	49000	49000
84	33621760/505	Էնալապրիլ դեղահատեր,5մգ;	24000	48000	72000	96000	96000
85	33621760/506	Էնալապրիլ դեղահատեր,10մգ;	31200	62400	93600	124800	124800
86	33621760/507	Էնալապրիլ, դեղահատեր,2,5մգ;	14000	28000	42000	56000	56000

92	33671114/503	ամինոֆիլին,լուծույթ ն/ե ներարկման,24մգ/մլ; ամպուլներ 5մլ	32375	64750	97125	129500	129500
93	33671114/504	ամինոֆիլին,դեղահատեր,150մգ;	1200	2400	3600	4800	4800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

« Կապանի բժշկական կենտրոն » ՓԲԸ

Սյունիք Կապան Մ. Ստեփանյան 13

Բանկ՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ

Հ/Հ 15700263039801000

ՀՎՀՀ 09420382

Տնօրեն Կարեն Մելքումյան

ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ»ՍՊԸ

ք. Երևան, Աբովյան փ. /23

Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 19300653151400

ՀՎՀՀ 02828767

Տնօրեն Ե. Փոթոյան

ստորագրություն